

ԴԱՍ 3.2. ԱՄՆ: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները

...

Հետագայում այդ գաղութները ստացան քաղաքական ինքնուրույն պետական միավորների՝ նահանգի կարգավիճակ: Այդ գաղութները միավորվեցին Անգլիայի դեմ տարած զինված պայքարի՝ Հյուսիսային Ամերիկայի Անկախության պատերազմի շնորհիվ, երբ 1776 թ. ընդունվեց **Անկախության դեկլարացիան** և հռչակվեց աշխարհում մի նորանկախ պետություն՝ ԱՄՆ-ն: Անգլիան ընդամենը 1783-ին ճանաչեց ԱՄՆ-ի անկախությունը՝ Ֆրանսիայում (Վերսալ քաղաքում) կնքված հաշտության պայմանագրով:

Հետագայում ԱՄՆ-ն սկսեց տարածքներ խլել և իրեն միացնել այլ երկրներից: Հյուսիսային Ամերիկայի իսպանական, ֆրանսիական գաղութների և Մեքսիկայի հաշվին ընդարձակեց իր տարածքները, իսկ 1867 թ. 7,2 մլն. դոլարով գնեց և իրեն միացրեց Ալյասկան: ԱՄՆ-ն կազմված է 50 նահանգից և մեկ դաշնային օկրուգից՝ Կոլումբիա, որտեղ էլ գտնվում է պետության մայրաքաղաք Վաշինգտոնը: 1958 թ. ստեղծվեց 49-րդ նահանգը՝ Ալյասկան, 1959 թ-ին՝ 50-րդը՝ Հավայի նահանգը, որը ներառում է Հավայան կղզիները: ԱՄՆ-ի պետական դրոշի վրայի 50 աստղը նահանգների թիվն է:

...

Յուրաքանչյուր նահանգ ունի իր սահմանադրությունը, գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունը, որոնք ենթարկվում են դաշնային օրենսդրությանը:

...

Երկրի ՏԱԴ-ը շատ նպաստավոր է: Այն գտնվելով Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների միջև, ծովային ուղիներով կապված է Եվրոպայի, Ասիայի և մյուս աշխարհամասերի հետ: Սակայն ՔԱԴ-ի առումով այդ տարածաշրջանի

հեռու գտնվելը դրական դեր է խաղացել ռազմավարական-պաշտպանական առումով: Դիտարկենք երկու աշխարհամարտերի օրինակով:

• • •

ԱՄՆ-ի ՔԱԴ-ի կարևոր առանձնահատկությունը ՌԴ-ին մոտ լինելն է: ՌԴ-ից բաժանվում է Բերինգի նեղուցով, Բերինգի և Չուկոտյան ծովերով: Երկրի ՏԱԴ-ի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ աշխարհի ծովային երկրորդ խոշոր ջրանցքի՝ Պանամայի ջրանցքի մոտիկությունն է: Այն օգտագործվում է ոչ միայն միջազգային բեռնափոխադրումների, այլև՝ երկրի արևմտյան և արևելյան շրջանները իրար հետ կապելու համար:

Բնական պայմանները և ռեսուրսները: Հյուսիսից հարավ, արևմուտքից արևելք մեծ ձգվածության, բարձրաչափական զգալի տարբերությունների և օվկիանոսների մոտիկության պատճառով ԱՄՆ-ի բնակլիմայական պայմանները խիստ բազմազան են: Ռելիեֆի գլխավոր առանձնահատկությունը հզոր և բարձր լեռնային համակարգերի և ընդարձակ հարթավայրերի լայն տարածումն է: Երկրի արևմուտքում գտնվում է Կորդիլիերան՝ իր լեռնաձյուղերով. Ալյասկայի (սրա վրա էլ ԱՄՆ-ի բարձր գագաթն է՝ Մակ Բինլին 6193 մ), Ժայռոտ, Կասկադյան, Սիեռա Նևադա և այլն: Լեռնային համակարգի ներքին շրջաններում տարածված են Մեծ Ավազան, Կոլորադոյի, Կալիֆոռնիական և Կոլումբիական միջլեռնային գոգավորությունները: Երկրի արևելքում՝ հին, քայքայված, Հերցինյան հասակի Ապալաչյան լեռներն են, որոնց և Կորդիլիերների միջև գտնվում են Կենտրոնական և Մեծ հարթավայրերը: Խոշոր են նաև Միսիսիպիի դաշտավայրը, իսկ օվկիանոսի ափամերձ գոտում՝ Մերձատլանտյան դաշտավայրը:

• • •

ԱՄՆ-ի բուն տարածքը ընկած է արևադարձային, մերձարևադարձային, բարեխառն, Ալյասկան՝ արկտիկական և մերձարկտիկական, Հավայան կղզիները՝ արևադարձային կլիմայական գոտիներում: Կլիմայի ձևավորման վրա ազդող կարևոր գործոններից են Գոլֆստրիմ տաք և Լաբրադորյան սառը հոսանքները Ատլանտյան օվկիանոսում, Ալյասկայի տաք և Կալիֆոռնիական սառը հոսանքները Խաղաղ օվկիանոսում:

Տիրապետում են անապատակիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային, անտառային և տունդրայի լանդշաֆտները:

• • •

ԱՄՆ-ի կյանքում մեծ դեր են խաղում Ամերիկյան Մեծ լճերը: Սրանց շուրջը ստեղծվել է բարձր ուրբանացված գոտի: Այս լճերը ունեն նաև զբոսաշրջային մեծ նշանակություն, օրինակ՝ **Նիագարայի** ջրվեժը համանուն գետի վրա: Երկրի արևմտյան մասում տնտեսական մեծ նշանակություն ունի Մեծ աղի լիճը, որի ծանծաղ չորացող տեղամասերից ամռանը կերակրի աղ են արդյունահանում: Ռեկրեացիոն մեծ նշանակություն ունեն Ֆլորիդայի հանգստավայրային գոտիները, Կալիֆոռնիական ծովափնյա գոտին, Ելոուսթոնյան ազգային պարկը, Նիագարայի ջրվեժը և այլն:

• • •

Համաշխարհային պատերազմներում Եվրոպայում տասնյակ միլիոնավոր մարդիկ զոհվեցին (I աշխարհամարտ՝ 10 մլն., II աշխարհամարտ՝ 55 մլն., որից 20 մլն-ը ԽՍՀՄ-ից), շատ երկրներ հիմնահատակ ավերվեցին, քայքայվեց տնտեսությունը, իսկ ԱՄՆ տարածքը պատերազմների թատերաբեմից շատ հեռու էր և ընդհանրապես չտուժեց: Կարելի է վստահորեն ասել, որ ներկայիս հզորությունը ուղակիորեն կապված է քաղաքաաշխարհագրական բարենպաստ դիրքի ընձեռած առավելություններով: Եվրոպական շատ երկրներ տնտեսությունը վերականգնեցին զրոյից:

Հավայան կղզիները մեծ մասամբ ունեն հրաբխային ծագում: Այստեղ են գտնվում աշխարհի ամենաակտիվ **Կիլաուեա**, ինչպես նաև **Մաունա Լոա**, **Մաունա Կեա** հրաբուխները:

ԱՄՆ-ը հարուստ է օգտակար հանածոներով, բայց դրանք բավարարում են բազմաձյուղ ու բարձր զարգացած արդյունաբերության պահանջարկի 2/3-ը: Քարածխի հարուստ պաշարներ կան Ապալաչների և Իլինոյսի խոշոր ավազաններում (ԱՄՆ-ն ածխի պաշարներով աշխարհում երկրորդն է՝ ՌԳ-ից հետո, 3,6 տրլն. տ), նավթի և գազի՝ Մեքսիկական ծոցի ափին, Կալիֆոռնիայում, Ալյասկայում (Ալյասկայի նավթի արդյունահանման ինքնարժեքը բարձր է: Ինչու՞), երկաթաքար՝ Վերին լճի շրջանում, պղինձ, ցինկ, կապար, մոլիբդեն, ուրան, ոսկի՝ Ժայռոտ լեռներում: Ոսկու պաշարներ շատ կան Ալյասկայում:

Երկրի ներքին շրջաններում լեռների բացակայության պատճառով արևադարձային տաք օդը կարող է անարգել շարժվել հյուսիս, արկտիկական սառը օդը՝ հարավ: Արևադարձային տաք և արկտիկական սառը օդային զանգվածների շփման գոտում ԱՄՆ-ի կենտրոնական, հարավային և հարավարևելյան շրջաններում հաճախ առաջանում են ուժեղ մրրկահողմեր՝ **սմերչ**, որոնց ԱՄՆ-ում անվանում են **տոռնադո**:

• • •

Գետի ավազանը զբաղեցնում է ԱՄՆ տարածքի գրեթե կեսը: Միսիսիպիի խոշոր վտակներն են **Արկանզասը** և **Օհայոն**: Հյուսիսարևելքում նշանավոր գետը **Սուրբ Լավրենտիոսն** է, որը Ամերիկյան Մեծ լճերի հետ կապված է խորջրյա գետալճային համակարգով, որով նույնիսկ ծովային նավերը հասնում են Միչիգանի ափին գտնվող Չիկագո նավահանգիստ:

Երկրի արևմուտքում խոշոր գետեր են **Կոլորադոն** և **Կոլումբիան**, որոնք ունեն ոռոգիչ և էներգետիկական նշանակություն: Կոլորադոն ունի նաև զբոսաշրջային նշանակություն (Մեծ Կանյոն): Կոլումբիա գետի վրա ջրէկերի կասկադ կա, որի խոշոր էլեկտրակայանը աշխարհի խոշորների տասնյակում է՝ **Գրանդ Կուլի**: